ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 4-ին, կիրակի. - Ծաղկազարդ: Պահք:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Դավիթ արքեպիսկոպոս Սահակյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Սրբազան Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 29):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Ապրիլի 7-ին, չորեքշաբթի.- Պահք: Աւետումն Ս. Աստուածածնի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վարդապետ Ջիրեկյանցը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ուրախ լեր, բերկրեալդ, Տէր ընդ քեզ» (Ղուկ. Ա 28) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի Մայրության և գեղեցկության օրվա առիթով կատարվեց Օրհնության կարգ:

Ապրիլի 8-ին, հինգշաբթի. - Պահք: Յիշատակ ընթրեանց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կյուրեղ աբեղա Վարդանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբն ընթերցեց Կյուրեղ Երուսաղեմացի Հայրապետի թուղթը:

Երեկոյան կատարվեց Ոտնլվայի և ապա՝ Խավարման կարգը, հընթացս որի հոգեպարար քարոզ խոսեց Գերշ. Տ. Տաթև արքեպիսկոպոս Սարգսյանը:

Ապրիլի 9-ին, ուրբաթ. - Պահք: Յիշատակ չարչարանաց եւ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր, ճաշու ժամին, Մայր Տաճարում կատարվեց Խաչելության կարգ:

Երեկոյան, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Թաղման կարգը:

Ապրիլի 10-ին, շաբաթ. - Պահք: Ճրագալոյց Զատկի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արտակ վարդապետ Տիգրանյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Եվ ահա մեծ երկրաշարժ եղավ, որովհետև Տիրոջ հրեշտակը երկնքից իջնելով՝ մոտեցավ, դռնից վեմը մի կողմ գլորեց ու նստեց նրա վրա» (Մատթ. ԻԸ 2) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 31):

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցական թափորը, հանդիսապետությամբ Վեհափառ Հոր, շարժվեց դեպի Վեհարան, որտեղ կատարվեց Տնօրհնեքի արարողություն:

Ապրիլի 11-ին, կիրակի. - ՋԱՏԻԿ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Զատկական Ս. Պատարագ մատուցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Վեհափառ Հայրապետն իր Զատկական պատգամն ուղղեց համայն հայությանը (տե՛ս էջ 3):

Ապրիլի 12-ին, երկուշաբթի. - Բ. օր Զատկի: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը «Ակնկալութիւն քրիստոնէից՝ յարութիւն մեռելոց» (Տերտուղիանոս) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 34):

Ապրիլի 17-ին, շաբաթ. - Է. օր Զատկի: Յիշատակ գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի:

Այսօր Ս. Էջմիածնի Մկրտարանում, Ս. Հովհաննես Մկրտչի Խորանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կտրիճ քահանա Դևեճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ապրիլի 18-ին, կիրակի.- Ը. օր Զատկի: Կրկնազատիկ (Նոր Կիրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մոմիկ վարդապետ Սարգսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ես իսկ եմ հարություն և կյանք. ով հավատում է ինձ, թեպետ և մեռնի, կապրի. և ով կենդանի է ու ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի» (Հովհ. ԺԱ 25-26) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 37):

Հավարտ Ս. Պատարագի, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, կատարվեց Հոգեհանգստյան պաշտոն:

Ապրիլի 24-ին, շաբաթ. - ԺԴ. օր Յիսնից:

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Արշակ վարդապետ Խաչատրյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մարդու Որդին կգնա այս աշխարհից, ինչպես նրա մասին գրված է, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով կմատնվի մարդու Որդին: Ավելի լավ կլիներ նրա համար, եթե այդ մարդը ծնված չլիներ» (Մատթ. ԻԶ 24) բնաբանով քարոզ խոսեց:

Հավարտ Ս. Պատարագի եկեղեցականաց թափորը, հանդիսապետությամբ Վեհափառ Հայրապետի, ուղղվեց դեպի Մայրավանքի՝ 1915 թ. Մեծ եղեռնի նահատակներին նվիրված հուշակոթող, որտեղ և կատարվեց Հոգեհանգստյան մասնավոր պաշտոն՝ ի հիշատակ մեր մեկ ու կես միլիոն անմեղ զոհերի:

Ապրիլի 25-ին, կիրակի. - Գ. կիր. Աշխարհամատրան (Կանաչ Կիրակէ):

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Իգնատիոս աբեղա Մալխասյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Ընդ անմարմնական բազմութիւնսն զՔրիստոս թագաւորն՝ որ եկաւորի այսօր ի սուրբ Եկեղեցի. ամենայն ազինք գովեցէք և առաւել բարձր արարէք զնա յաւիտեան» (Շարակնոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 43):